**Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Նորաբակ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի /15 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում/Ձև 1/,մեկ լուսանկար 3*4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,

2.Անձը հաստատող փաստաթուղթ,

3.<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/,

4. Ինքնակենսագրություն,

5. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

6. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ,

7. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/,

8.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. ապրիլի 10-ից մինչև ապրիլի 23-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10,00-ից մինչև 15,00-ն,բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝տոնական և հիշատակի օրերից, Նորաբակ գյուղի միջնակարգ դպրոցի շենքում:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. ապրիլի 28-ին՝ ժամը 12:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի միջնակարգ դպրոցում,հասցեն՝ գ.Նորաբակ: Տեղեկությունների համար զանգահարել 077454002 հեռախոսահամարով, էլ հասցե՝ norabak@schools.am.